

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ

Երկիրս, ինչպէս յայտնի է, գնտածե է, բայց ոչ  
հարթ ու հաւասար, այլ վերին աստիճանի խորդ ու բորդ:  
Ահադին լեռները իրանց բարձրաբերձ գաղաթներով  
բարձրանում են ամպերից էլ վեր. իսկ հովիտներն ու  
հարթութիւնները կազմում են խորութիւններ, ֆամանակի  
ընթացքում այդ անհաւասարութիւնները հարթանում են:  
Մի կարդ պատճառներ գոնդաղ, բայց անդադար աշխա-  
տում են երկրի մակերևոյթի փոփոխութեան վրայ: Լեռ-  
նային գաղաթները քամու ազդեցութեան տակ փխրում  
են, անձրեից ողողւում և նրանց մանրացած մասնիկները  
գտակների միջոցով տարւում են դէպի հովիտները: Երկրի  
մակերևոյթի փոփոխութեան վրայ թափուած այդ աշխա-  
տանքը այնպէս դանդաղ է կատարւում, որ մեր կարճ  
կեանքի ընթացքում չենք նկատում այն և կարծում  
ենք, որ երկրի մակերևոյթը իւր գլխաւոր գծագրութեամբ  
մնում է անփոփոխ: Բայց անցնում են հաղարաւոր տա-  
րիներ և աննկատելի գործիչների անխօնջ աշխատութեան  
արդիւնքը այն է լինում, որ երկրի մակերևոյթը նկատելի  
կերպով փոփոխուում է: Հողմահարուած և ջրից ողողուած  
բարձրութիւնները ցածրանում են, իսկ նրանց նիւթը  
իրանց վրայ ընդունած ցածրութիւնները բարձրանում են:  
Նոյնը պէտք է ասել նաև մարդկութեան բարոյական  
տրամադրութեան մասին: Այստեղ նոյնպէս յառաջանաւմ  
է իւր տեսակի հաւասարեցումն, ցածրութիւնները աստի-  
ճանաբար բարձրանում են, իսկ խորդ ու բորդութիւն-  
ները հաւասարւում: Երբ մենք սկսում ենք գնահատել  
վաղուց անցած-դնացած ժամանակները համեմատութեամբ  
ներկայի հետ, մոռանում ենք պատմական հեռանկարի

օրէնքը, մոռանում ենք, որ որքան մի որ և է տեղից հեռանանք, այնքան նոյն տեղից ցածրութիւնները աչքից կանյայտանան և հեռուից տեսանելի կլինեն միմիայն բարձր առարկաները՝ լեռների գագաթներ, աշտարակներ, զանդակատներ և այլն։

Մտքով տեղափոխուելով քրիստոնէութեան առաջին օրերը և առաջին գարերը, մենք տեսնում ենք այնտեղ առաքեալների սուրբ գէմքեր, նահատակների բազմութիւն, մի կարգ ճգնաւոր-սքանչելագործներ, եկեղեցու մեծամեծ հայրեր և վարդապետներ, և խորապէս ցաւում ենք, որ մեր օրերում չկան այդպիսի մարդիկ, սակայն մոռանում ենք, որ առաքեալներն ու նրանց մեծ յաջորդները եղել են մարդկութիւնը ճնշող բարոյական խաւարի մէջ Քրիստոսի լուսով պայծառ լուսաւորուած գագաթներ միայն։

Արեգակը ծագելով՝ անմիջապէս լուսաւորում է մի միայն լեռան գագաթները, իսկ մինչև լոյսի նրա ստորառը հասնելը որոշ ժամանակ է պէտք Յիսուս Քրիստոս իւր վարդապետութիւնը նմանեցրեց թթխմորի, որ դնում են խմորի մէջ և որի ներդործութիւնը իսկոյն և եթ չի յայտնելում, այլ որոշ ժամանակ անցնելուց յետոյն Երկար, ձիւնառատ և խստաշունչ ձմեռից յետոյն երբ գարունը սկսում է, թէև արեգակը պայծառ է լուսաւորում և օդի մէջն էլ ջերմութիւն կայ, բայց ձմեռուայ բերած ձեան ահագին կոյտերը գաշտերից մի անգամից չեն հեռանում, այլ նրանք դեռ երկար ժամանակ գետինը պահում են իրանց ծածկոյթի տակ։ Աւրեմն պարզ է, որ մարդկութիւնն էլ իւր մեծամասնութեամբ չի կարող մի անգամից ազատուել գարերի ընթացքում իւր վրայ կիտուած ցեխից, կեղոտառութիւնից՝ չի կարող մի անգամից խմորուել Քրիստոսի խմորացով։ Գարնանը ձիւնից ազատում են նախ և առաջ բլրակները, ապա աստիճանաբար գաշտերում երեւում են բաց տեղեր։

Այդպէս է նաև մարդկանց մէջ։ Քրիստոնէական սիրոյ և արդարութեան ճառագայթների ներքոյ կենդանու-

թիւն ստացել են նախ զգայուն, վաեմ հոգիները, իսկ ժողովրդի մնացեալ մեծամասնութիւնը Աւետարանի ձայնին արձագանք է տուել շատ ուշ։ Մարդկութիւնը գէպի բարութիւնը կատարած ճանապարհորդութեան ժամանակ նոյնն է, ինչ որ զօրքը արշաւանքի ժամանակ։ Աւելի զօրեղները գնում են առաջից, թոյլերը յետ են մնում։ բայց զօրքը ընդհանուր առմամբ շարժում է առաջ, թէև դադար է առնում, հանգստանում է, թոյլերին սպասում։ Մասնաւոր մարդկանց համար գուցէ աննկատելի, բայց Քրիստոսի խմորը ցոյց է տալիս իւր ներդործութիւնը։ Թէև ամբողջ սերունդները չեն նկատում մարդկութեան բարոյական բարեզրումը, բայց պատմութիւնը պարզ կերպով խոստովանում է այդ։ Կրկէսների հրապարակներում տեղի ունեցած ըմբշամարտների և գաղանների կոիւը ներկայումս անհնարին է։ Մենք մինչև անդամ վրդովւում ենք եղների մարտով, գայլերի և նապաստակների անխիղճ որսորդութեամբ։ Սորկութիւնը քրիստոնեայ ժողովրդների մէջ արդէն անցել է աւանդութեան կարգը։ Հետաքրքիր է այդ կոշտ ու կոպիտ երեսյթի պատմութեան հետազնութիւնը, երեսյթի, երբ մինը դաւնում է միւսի աշխատող անասունը։ Հին ժամանակուայ ամենամեծ իմաստունները՝ Պղատոնն ու Արքիստոտէլը, ստրկութիւնը համարում էին բնական և արդարացի երեսյթ։ Նոյն իսկ ամենալուսաւորեալ ազգերի մէջ օրինաւոր էր համարում գաղանային, տմարդի վերաբերմունք գէպի ստրուկները։ Ոհա մի ընորոշ գէպը։ Մեկենասը, հոսվմէական մի իշխան, Օգոստոս կայսեր անձնական բարեկամը, մի մարդ, որ յայտնի էր իբրև լայն չափով հովանաւորող գիտութիւններին և արհեստաներին, իւր մօտ պիտի ընդունէր թագաւորին։ Ճաշի ժամանակ ստրուկներից մէկը ձեռքի անզգոյց շարժումով վայր ձգեց բիւրեղեայ բաժակը և պատուանդանը կոտրեց։ Մեկենասը իսկոյն և եթ հրամայեց թշուառին ձգել պարտիզի լիճը, որտեղ մարդկային մսով կերակրում էին տիրոջ սեղանի համար ձկներ։ Կայսրը ինդրեց, որ ի չնորհս իւր այցելութեան չնորհէ

սարուկի կենաքը:

— Հէնց քո այցելութեան համար պէտք է աւելի զգոյշ շարժուէր, պատասխանեց Մեկենասը, և ստրուկին խեղդեցին:

Այդպիսի իշխանութիւն ունէին տէրերը ստրուկների վրայ և այգպէս տմարդի կերպով վարեռում էին նրանց հետ։ Քրիստոնէութիւնը առաջին դարերում մի փոքր մեղմացրեց ստրկութեան սարսափները, բայց բոլորովին ոչնչացնել չկարողացաւ։ Գարնան արեգակը որքան էլ այրէ, սառոյցը և ձիւնը իսկոյն և եթ չի վերջանայ, այլ դեռ շաբաթներով բարեխառն եղանակ է լինում։ Այդպէս է և ստրկութիւնը, Քրիստոնէութեան ժամանակ այդերևոյթը մեղմանալով տեղի տուեց ճորտային վիճակին՝ մի կախումն, որ սկզբում զարհուրելի էր, վերջապէս ճորտային իրաւունքն էլ վերջացաւ և ժողովուրդը դարձաւ բոլորովին ազատ։ Այժմ մարդու վրայ գործադրուած ամեն մի բռնութիւն համարւում է ամօթալի։

Մարդասիրական զգացումը թափանցում է նոյն իսկ դէպի թշնամիներն ունեցած յարաբերութեանց մէջ։ Պատերազմը թէն այժմս էլ կայ և դեռ երկար ժամանակ պիտի լինի մարդու ուղեկիցը, սակայն թէ նրա պատճառները և թէ նոյն իսկ նրա բնաւորութիւնը քանի գնում, յիրաւի դանդաղ կերպով մեղմանում են։ Նախապատմական ժամանակներում, երբ մարդկութիւնը կանգնած էր իւր ամենաստոր աստիճանի վրայ, ամենավայրենի ցեղերի մէջ պատերազմը գոյութեան անհրաժեշտ միջոցն էր Վայրենին պատերազմ՝ էր գնում ինչպէս որսի. թշնամին նրա համար համեղ որս էր։ Նա կամ սպանում էր նրան, կամ գերի վերցնում ուտելու համար։ Պատերազմը պարտութիւն կրողին բերում էր անխօսափելի մահ։ Ժամանակի ընթացքում պատերազմի գրդիչ պատճառները փոխուում են։ Թէ արևելքի և թէ հնութեան միւս աշխարհակաները ձգտում էին այլ ևո ոչ թէ ուտելու մերածակայ և հեռուի ժողովրդներին, այլ սրի միջոցով տիրելու նրանց և ստրկացնելու։ Այստեղ պատերազմը իւր հետ

անպայման մահ չեր բերում, այլ բերում էր անխռուսակի ստրկութիւն։ նա ազատութիւնից զլկում էր, բայց կեանքին չեր կպշում։ Անցնում են դարեր և յաղթուղին չնորհում են թէ կեանքը և թէ ազատութիւնը։ նա միայն զրկում է նիւթականապէս, նրանից խլում են նահանգներ, նաւահանգիստներ, ուազմական գործիքներ, պահանջում են յաղթողի պատերազմական ծախսերը, և այն։


Այսպէս պատերազմի հետեանքները պատմութեան առաջ յայտնի կերպով կերպարանափոխուեցին դէմի լաւը յաղթողը սկզբում պահանջում էր կեանք, յետոյ ազատութիւն, իսկ այժմ փողի տուպրակ, փոխուած է նոյն իսկ պատերազմի բնաւորութիւնը։ Անդէն թշնամու դէմ բարբարոսական տմարդի վարմունքը գրօշմուում է իրեւ անարդ դադանութիւն։ Թշնամին թշնամի է համարւում զէնքը ձեռին, իսկ վիրաւորուած կամ գերի բնկած դէպքում նա տանջուող եզրայր է, որ կատարեալ իրաւունք ունի օդնութիւն սպասելու յաղթողից։ Պատերազմական հին կանոնը ասում է. «աշխատիր թշնամուդ կարողացածիդ շափ վնաս հասցնելու» իսկ փոխակերպուած նորը ասում է. «թշնամուդ այնքան չարիք հասցրու, որքան պահանջում է պատերազմի յաջողութիւնը»։ Առանց կարևորութեան խաղաղ բնակիչների բնակութիւնը քար ու քանդ անելը համարւում է բարբարոսութիւն, իսկ գրաւուած երկրի մէջ կողապուտ անելը պատժում է, որպէս յանցագործուաթիւն։ Այդ քիչ է. խօսք կայ պատերազմի սարսափները բոլորովին վերացնելու մասին։ Ակզրում խաղաղութեան կողմնակից ձայները սակաւ էին և անհամարձակ. նրանց վրայ ծիծազում էին, համարում էին դատարկ, անիրադորձելի ցնորքներ. բայց այդ ձայները քանի գնում աւելի բարձրանում են, հնչում են աւելի յաճախ՝ վերջապէս լուսում են գահի բարձրութիւնից։ Ընդհանուր և անտանելի սպառազինման թեթևացման մասին խորհրդածելու նպատակով համաժողով. վերջինս ոչ մի էտկան եզրակացութեան չեկաւ. բայց այդ չի ցոյց տալիս նրա անօգուտ

լինելը. թէև դրանով չփոխուեց տէրութիւնների գործութեանց բնաւորութիւնը, բայց կարեսրն այն է, որ մարդիկ առաջին անգամ աշխարհի ստեղծումից յետոյ ի գէմս իւրեանց կառավարութեանց խորհրդածեցին ամբողջ աշխարհի խաղաղութեան մասին։ Սկսեցին խորհել՝ վաղ թէ ուշ մի եղբակացութեան կգան։ Նոր ժոքերը մի անգամից չեն ընդունուի. նրանք հատիկի պէս են. առաջ կուռչեն, յետոյ ծիլ կարձակեն, և վերջապէս կկանաչեն։

Այս բոլորը համոզեցուցիչ կերպով ասում է մեզ, որ չարութեան դադաթները ցածրանում են, իսկ բարութեան մակերեսոյթը բարձրանում է. որ չարիքը, եթէ ոչ բոլորովին, գոնէ իւր գլխաւոր և խոշոր ձեւերով մեզմանում է, կորցնում է իւր դառնութիւնն ու կծուռութիւնը։ Մարդկային խիղճը սկսում է վրդովուել այն ամեն բանով, որի հետ առաջ հեշտութեամբ հաշտում էր։ Խոշորացոյցի գիւտով, որով մի կաթիլ ջրի մէջ կարելի է տեսնել հազարաւոր կենդանի էակներ, մարդկանց առաջ բացուց նոր աշխարհ՝ անօահման մանր մանրակազմերով։ Մարդիկ սովորեցին հասկանալ զանազան վարակիչ հիւանդութեանց պատճառները, որ հասարակ աչքի համար անտեսանելի միկրոբներ են՝ ցրուած օդի մէջ։ Ահա ջրի և օդի մէջ գտնուած այդ միկրոբների գէմ մարդիկ այժմ սկսել են սաստիկ պատերազմ։ Կեզտոտ ջուրը գտելու համար շինուած են մաքրիչներ։ Քաղաքների մէջ օդի մաքրութեան համար տնկում են պարտէզներ և ծառաստաններ։ Հողը մաքրում է ստորերկրեայ ջրանցքներով։

Նախկին ժամանակներում աւելի կեզտոտ էին ապրում մարդիկ. բայց ոչ մի միկրոբից չէին վախճնում։ Ներս էին չնշում այդ միկրոբներն ու թունաւորում, նրանցից հիւանդանում էին և մեռնում. բայց նրանց գոյութեան մասին չէին իսկ կասկածում։ Գտնուեցաւ խոշորացոյցը, հնարաւորութիւն եղաւ գիտելու ջրի կաթիլի և ամեն մի աւազահատիկի կեանքը, և մարդիկ սկսեցին յամառութեամբ կռիւ մղել կեզտի և փոշու՝ իբրև վարակիչ միկրոբների պատճառների գէմ։

Նոյնն է լինում մարդկանց ներքին, բարոյական կեանքի հետ։ Մարդկային կեանքի այն բազմաթիւ մութ կողմերը, որոնց մասն լուռում են բարձրագոչ բողոքներ, իսկապէս նոր չեն։ Նրանք միշտ եղել են և ի հարկէ երակար ժամանակ էլ կլինեն։ Նրանցից շատերին մարդիկ սովորել են և չեն նկատում նրանց այլանդակութիւնը։ Բայց ահա արդարութեան արեգակը սկսեց աւելի և աւելի բարձրանալ երկրի վրայ. սկսեց մարդկանց հոգու ներսը լուսաւորուիլ, մարդկային խիղճը դարձաւ աւելի սրատես, ձեռք բերեց իւր խոշորացոյցը, և այժմ սկսում են սարսափել այն բարոյական կեղտից, որով ապականուած է մարդկային կեանքը։ Բայց բարքերի ապականութեան մասին եղած բարձրագոչ բողոքները չպէտք է մեզ շփոթեն։ Չարիքի մեծութեան առաջ չպէտք է ձեռնթափ լինել, պէտք է աշխատել յանուն բարութեան։ Բարութիւնը աճում է երկրի վրայ։ Աիրոյ և արդարութեան համար նախկին գործիչների աշխատանքը չի կարող ապարդիւն մնալ. նրանք շատ բաների մէջ թեթևացրել են մեր աշխատանքը, մաքրել են մեր ճանապարհը։ Աստուծութագաւորութիւնը մօտ է մեզ։ Դէպի նրան տանող ճանապարհները հարթուած են։ Ճանապարհը յայտնի է. գնանք դէպի այնտեղ և, եթէ կարող ենք, ուրիշներին էլ տանենք։



## ԱԼԵՏԱՐԱՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷջ

Յիսուս Քրիստոսի մահուանից յետոյ արդէն քսանեւ ըսրդ դարն է սկսում, բայց մարդկանց կեանքի կազմակերպութիւնը Աւետարանի վարդապետութեան համաձայն լինելուց դեռ շատ հեռու է։ Զարմանալի չէ ուրեմն, որ շատերին այնպէս է թւում, թէ Քրիստոսի վարդապետութիւնը առ հասարակ անդօր է մարդկային կեանքն ուղղելու։

—Քրեթէ երկու հազար տարի է, ինչ քարոզւում է

Աւետարանը, ասում էին մի հաւատացող քրիստոնէիր պյառուամենայնիւ ինչի՞ է նման քրիստոնեաների կեանքը։ — Եթէ նրանք այժմ վատ են, երբ Աւետարան ունեն, պատասխանեց հաւատացողը, հապա ինչ կիմէին, Եթէ բոլորովին ծանօթ զինէին Քրիստոսի վարդապետութեան հետ, կարճառես և աչքերի վրայ սովիտակ ունեցող մարդիկ արեգակի լուսով էլ գայթում են, իսկ ինչպէս կշրջէին նրանք, եթէ իրանց շուրջը խորին մժութիւն լինէր»։

Արդեօք մարդկային կեանքը փոխուել է Յիսուս Քրիստոսի վարդապետութեան ազդեցութեան ներքոյ. արդեօք Աւետարանը ազդում է մարդկանց վրայ ընդհանրապէս. այս մասին ուղիղ դատելու համար պէտք է համեմատել Քրիստոսի ժամանակուայ կեանքը ժամանակակից կեանքի հետ։

Խարկովի համալսարանի հանգուցեալ ուսուցչապետ Պետրովի «Պատկերներ տիեզերական պատմութիւնից» գրքի մէջ կայ մի խիստ գեղեցիկ յօդուած. «Աւետարանը պատմութեան մէջ», որտեղ շնորհալի կերպով նկարագրում է այն փոփոխութիւնը, որը յառաջացրեց մարդկանց մէջ Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը։

«Հռովմը Փրկչի ժամանակ աշխարհի տէրն էր. Ամեն ինչ հպատակում էր Հռովմին և նրան հարկ տալիու Անսպառ էին նրա հարստութիւնները. Դէպի այնտեղ էին դիմում գիտնականները, հեղինակներն ու գեղարուեաստագէտները։ Հռովմը կրթութեան կեդրոն էր և այնուամենայնիւ սոսկալի էր նրա կեանքը։

«Հռովմը տեղադրուած էր Տիբրոս գետի ափին և տարածուած էր եօթը բլուրների վրայ։ Նրա մէջ ապրում էր երկու միլիոն ժողովուրդ, բարձրանում էին չորս հարիւր եկեղեցիներ, կային թագաւորների և հռովմէական ազնուականների երկու հազար հոյակապ ապարանքներ։ Այդ ապարանքներից ամեն մէկը առանձին առած մի փոքրիկ քաղաք էր կազմում։ Նրան շրջապատում էին պարտէղներ, ծառաստաններ, շբեղ բաղանիքներ, գաղանա-

նոցներ և ծառաների անհամար ընակարաններ։ Ներքուստ  
ամեն ինչ փայլում էր առասպելական շքեղութեամբ։  
Առաստազներն ու պատերը զարդարուած էին պատկեր-  
ներով, փայտեայ նուրբ գեղանկարներով և գունաւոր  
մարմարինով, յատակը մօգայիկ էր։ Աշխատելու սեղանը  
կոփածոյ սսկուց էր և կամ ամբողջապէս շինուած էր մի  
կտոր փայտից և մեր փողով արժէր վաթսուն հազար  
րուրի։ պատերի երկարութեամբ դարակների վրայ շար-  
ուած էին հոչակաւոր հեղինակների հազարաւոր ձեռա-  
դրեր՝ բանաստեղծների, իմաստասէրների։ բայց տանտերը  
շատ սակաւ էր աչք ձգում այնտեղ։ Նա զբաղուած է  
ճաշկերոյթի և ընթրիքի հոգսերով, որ տալիս էր ի պա-  
տիւ բազմաթիւ հիւրերի և պնակալէզների։ Նրա սեղանի  
համար բերւում են աշխարհիս ամենաընտիր բերքերը։ մի  
տեղից գինի, միւս տեղից ոստրէ, երրորդից պտուզներ,  
իսկ չորրորդից—որսեր։ Մի ընթրիքը երբեմն արժում էր  
հարիւր—հարիւր յիսուն հազար րուբլի։ լինում էն կերա-  
կուրներ, որոնք պատրաստում էին սիրամարգերի լեզու-  
ներից և թութակների ուղեղներից։ Հիւրերը բազմում  
էին բեհեղեայ բազմոցների վրայ։ ծառայող ստրուկ-  
ները ընտրւում էին իրանց հասակի և մազի գոյնի հա-  
մեմատ, մի տեսակ կերակուրը հրամցնում էին մի գոյնի  
զգեստով, օրինակ սպիտակ, միւս տեսակը՝ երկնագոյն։  
երրորդ տեսակը՝ կարմիր և այլն։ Զորս կողմը դղրդում  
էր երաժշտութեան ձայնից։ երգում էին հոչակաւոր եր-  
գիչներ, ոտանաւորներ էին կարդում ամենալաւ դերա-  
սաններ։ Վերեկից հիւրերի վրայ սրսկում էն թանգագին  
հոտաւէտ իւղեր։ ցանում էին ծաղիկներ։ Այդ բոլորը  
շատ փող արժէր, այդ բոլորը հարստահարսւած էր և  
միւնոյն ժամանակ դրանցով ամենքին ձանձրացրել էին և  
զղուացրել։ Ահազին փողեր էին առաջարկում նրան, ով  
մի նոր բաւականութիւն կամ զուարճութիւն կստեղծէր։  
«Յաւալի էր մարդկանց այդ կեանքը» Ռւնենալով աշ-  
խարհի համայն հարստութիւնը, մարդկային բոլոր խելքը,  
գիտութիւնը, բանաստեղծութիւնը արուեստները՝ մար-

դիկ ապրում էին միմիայն փորի համար:

«Եթէ անցնենք անից փողոց, հասարակական կեանք՝ կտեսնենք նոյն կոշտութիւնը և դատարկութիւնը» Ահա հռովմէական հաշակաւոր թատրոնը, ութառուն հազար հանդիսատեսներ առաւօտուանից լեցուած են այստեղ. հրապարակի վրայ իրար կրծոտում են սոված գաղաններ՝ առիւծներ, վագրեր, փղեր և ուրնգեղիւրներ. մռնչց, հառաջանք և գոռոց. Ամեն ինչ ծածկուած է արիւնով, ժողովուրդը պահանջում է ըմբշամարտներին. դուրս են գալիս դրանք, սկսում է մարդկանց և գաղանների մարտը. Սպանուածներին հաւաքում են: Դուրս են գալիս նոր մարտնչողներ: Մէկը ուզում է ձողը խրել, միւսը հեռուից աշխատում է պարան ձգել նրա վզին: Ուրիշները կուում են կապած աչքերով, աշխատում են իրար վիրաւորել լսողութեամբ: Այստեղ դուրս են եկել մի կարգ մարդիկ միւսների վրայ. այստեղ կռւում են կառքերով: Արիւնը հոսում է գետի պէս, լսում են հառաջներ, շարախինդ. զոչե՞ր, իսկ ամբոխը գոռում է հրճուանքից. վէճեր են լինում թէ ով ում կյաղթի:

«Այդպէս էին ապրում ազնուականները, լաւագոյն մարդիկը. իսկ ամբոխը տաղտկանում էր տգիտութեան, ստրկութեան և աղքատութեան մէջ: Նրանց մասին ոչ ոք չէր մտածում: Նրանց մինչև իսկ մարդ չեն համարում: Մի անդամ բոլոր ըմբշամարտերը կոտորուեցան, իսկ գաղանները դեռ ևս մնում էին հրապարակում: Այս ժամանակ կայսրը զինուորներ ուղարկեց հանդիսականների մէջ և այն տեղից երկու-երեք տասնեակ մարդ վերցրին և գցեցին գաղանների առաջ: Մի ուրիշ անդամ կրկէս սում պէտք է արշաւէր թագաւորի սիրելի ձին: Ժողովուրդը երիկուանից խռնուած էր կայսերական ախոռների մօտ: Կայսրը վախենալով որ ամբոխի աղմուկը կխանգարէր իւր սիրելի ձիու հանգստութիւնը, հրամայեց ամբոխի մէջ ձգել հարիւրաւոր պահ տրուած թունաւոր օձեր: Այդպէս էին վարւում աղատ ժողովուրդի հետ: Հապա ինչպէս էին ապրում ստրուկները: Ո՛չ օրէնքը և ոչ մարդիկ չէին

խղճում նրանց։ Ամենաշնչին յանցանքի համար թշուառներին ծեծում էին երկաթեայ շղթաներով։ չանկըստում էին սրածայր կիռմաններով և այրում շիկացած երկաթներով։ Հիւանդ կամ արատաւոր ստրուկին ձգում էին Տիբերոսի կղզիների վրայ, որպէս անպէտք կենդանու, որտեղ և մահ էր դժոնում առանց որ և է խնամքի։ Աճենաշնչին յանցանքի քննութեան ժամանակ մէկին տեսակ տեսակ տանջանքների ենթարկել սովորական երեսյթ էր և խաչի վրայի մահը համարւում էր հասարակ պատիժ»։

Սոսկալի՛ ժամանակ էր, սոսկալի՛ մարդիկ և սոսկալի բարքեր։ Ուստի յղփացած էին շոայլութեան մէջ, միւսները ապրում էին որպէս անասուն։ Եւ ահա ումանց համար անելանելի տանջանքների, իսկ ուրիշների համար անտանելի թախիծի և յղփութեան աշխարհում հնչում է սիրոյ և եղբայրութեան ձայնը։ Միլիոնաւոր ճնշուածներին, առարացածներին առում են, որ նրանք էլ մարդ են, որ նրանց մասին էլ հոգում է բոլորի Հայրը, որ Փրկիչը նրանց համար փրկութիւն է բերել։ Այս, այդ վարդապետութեան համար նրանք պատրաստ են թէ տանջանք կրելու և թէ նոյն խոկ մահ ընդունելու Եւ նրանք գնում էին, գնում էին հանդիսատ, ուրախութեան փայլը երեսներին, սիրոյ, խաղաղութեան և ներոզամտութեան խօսքերը շրթունքներին։

Մենք՝ մեծ ացած քրիստոնէական հասկացողութեամբ, մանկութիւնից վարժուած Քրիստոսի աւետաւոր մեծ խօսքերին։ շատ անգամ չենք կարող հասկանալ թէ որքան թանգ է մարդկանց համար Աւետարանի այս կամ այն միտքը։ Բարեկեցութեան մէջ ապրած մարդը չի կարող հասկացողութիւն ունենալ թէ աղքատի համար ի՞նչ գին ունի հինգ կամ տասը կոպէկը։

«Երանի աղքատաց հոգւով, երանի հեղոց, ողորմածաց, երանի որք սուրբ են սրտիւք, երանի որք հալածեալ իցեն վասի արդարութեան»։ Այս բոլորը ամենապայծառ լուսոյ ճառագայթներ են, որոնք լուսաւորում են անթափանցելի խաւարը։ Մարդիկ տեսան, որ իրանց

առաջ բացւում է նոր կեանք, որ եթէ իրանք գնան Քրիստոսի յետեից, այն ժամանակ իրանց մօտ կլինի ոչ գաղանային թագաւորութիւն, այլ Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վրայ։ Աւետարանը բերում էր ազատութիւն, ազատութիւն չարիքից, բերում էր և հոգւոյ նոր արիութիւն, որ պէտք էր այդ ազատութիւնը և մէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այսմիկ բարձիր և անկիր ի ծով և ոչ երկմտիցի ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա զոր ինչ և ասիցէ»։

Այժմ ամենայետին ստրուկը Աստուծոյ առաջ կարող է կայսրից, Հռովմի տիլովից բարձր լինել։ Մարդուս ամենից աւելի ոյժ է տալիս ոչ իշխանութիւնը, ոչ գիտութիւնը, ոչ հարստութիւնը, ոչ տոհմական ազնւութիւնը, այլ հաւատն առ Աստուած և առ Աստուածային արդարութիւնը։ Ի սէր այդ ոյժի, ի սէր Աստուածային արդարութեան մարդիկ պատրաստ են թողնել ամեն ինչ։ Նրանք այն վաճառականի նման էին, որը փնտրում է հազուագիւտ մարդարիտ և երբ գտնում է, գնում վաճառում է ամեն ինչ և գնում է այն։ Նրանց համար մինչև իսկ արիւնակցական կապերը կորցնում էին իրանց նշանակութիւնը։ Քրիստոնէի համար ամեն բանից բարձրը Աստուծոյ արքայութիւնը պէտք է լինի։ Դրա համար էլ Փրկիչը ասել է որ իրան արժանի չէ նա, ով հօրը, մօրը, աղջկանը կամ որդուն սիրում է իրանից աւելի։

Այսպէս ուրեմն Քրիստոնէութիւնն է բերել մարդկանց համար այն բոլոր ամենամեծ խօսքերն ու մոքերը, որոնք պարզում են թէ մարդուս իսկական գնահատութիւնը կախուած է ամենից առաջ նրա հոգւոյ արժանիքից, որ երկրի վրայ ամենից թանգը և բարձրը Աստուծոյ արդարութիւնն է և որ այդ արդարութեան համար պէտք է պահել ամեն ինչ։ Եւ եթէ մարդիկ այսպիսի սուրբ և մաքուր վարդապետութեան քարոզուելուց 1900 տարի յետոյ գարձեալ բարոյապէս կոշտ են, այն ժամանակ երեակայել իսկ չի կարելի թէ ինչ կլինէին (մարդիկ) նրանք, եթէ Աւետարան չլինէր։

Սարից վայր գլուխելը հեշտ է. անդունդ ընկնելը  
երկու-երեք վայրկեանի գործ. իսկ ստորոտից գագաթ  
բարձրանալու համար հարկաւորնէ երկար ժամեր նոյն իսկ  
օրեր։ Մարդիկ Քրիստոսի ժամանակ ընկած են եղել չա-  
փազանց խոր անդունդի մէջ։ Աւետարանը նրանց ուշքի  
բերեց, ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է բարձրանալ դէպի  
վեր և մարդիկ շարժւում են, որքան ներում են ոյժերը։  
Ո՞րքան աւելի վեր բարձրանան նրանք, այնքան աւելի օդը  
կլինի ջինջ, շնչառութենը թեթև, ոյժերը աւելի։ Մենք  
մարդկութեան յետեից հասանք ճանապարհին. նա վազուց  
է ճանապարհ ընկել, բայց դժբաղդաբար շատ առաջ չի  
գնացել։

Ուրեմն դանդաղ է առաջ դնում. Դադարումները  
յաճախ է լինում. չկան լաւ առաջնորդներ, սակաւ են  
լուսում ոգևորիչ խօսքեր՝ «յառաջ, յառաջ», Պէտք է խրա-  
խուսել։ Եթէ ուզում ենք որ մարդիկ գնան արագ և  
արիաբար, կանգնենք առաջ և տանենք մեր յետեից։

Մի հանգցնէք ոգևորութիւնը. թող չարիքի լեռը դեռ  
ևս մեծ լինի. «Ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս  
այսմիկ բարձիր և անկիր ի ծով և ոչ երկմտիցի ի սրտի  
իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա  
զոր ինչ և ասիցէ»։ (Մարկ. ԺԱ. 23.)։



## ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Աւետարանում ասուած է. «Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ տիկըն պատասխն և գինին հեղանի և տիկըն կորնչին, այլ արկանեն զգինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին»:

Արևելքում, շատ երկրներում, մինչև այժմս էլ գինին պահում են ոչ թէ տակառներում, տպակէ կամ կաւէ ամաններում, այլ տկերում։ Այծի կամ ոչլարի կաշին քերթում են, լուանում, չորացնում, յետոյ կարում են այն ճեղքը, որը գոյացել էր քերթելիս։ Այդպիսով ստացւում է կաշուէ տոպրակ, որի մէջ և պահուում է գինին։ Շատ ժամանակ անցնելուց, երկար գործածումից յետոյ կաշին նօսրանում է և կօրցնում իւր պնդութիւնը. հին գինին գեռ ևս կարելի է պահել նորանում, բայց նոր գինին հին տիկ լցնելը վտանգաւոր է։ Դեռ ևս չժթուած, նոր գինու մէջ ներգործում է թթւուալու ինչպէս սովորական խաշը բարձրացնում է խմորը և երբեմն նոյն իսկ բարձրացնում տաշտի կափարիչը, այնպէս էլ գինու խաշը նոր գինու միջից բարձրացնում է շատ օդ՝ գաղ. օդը այժմ է տալիս տիկի պատերին, ճնշում է աւելի ու աւելի ուժեղ, և եթէ տիկը հին է, մաշուած, այն ժամանակ շուտով պատռում. ոչնչանում է, և գինին թափում։ Դրա համար էլ Փրկիչը ասում է, որ հին տիկի մէջ կարելի չէ նոր գինի լցնել. հին գինին սազ է գալիս հին տիկին, իսկ նոր գինին պահանջում է նոր տիկ։

Գինի ասելով այստեղ պէտք է իմանալ կեանքի հասկացողութիւնները. իսկ տիկ ասելով՝ սովորութիւն, կենցաղ, կարգ ու կանոն։ Մարդս ինչ հասկացողութիւն որ ունենայ, ըստ այնմ էլ կլինի նրա կենցաղը, եթէ նա հասկացողութիւնը փոխի, կեանքն էլ կփոխուի։ Ասենք, օրինակ, մէկը խմում է. նա այնպէս է հասկանում, որ արազը օդտակար է, որ առանց արազի բանուոր մարդը չի կարող ապրիլ, որ գինին մարդու ուրախութիւն է պատ-

ճառում, և ահա նա այս հասկացողութիւնների համեմատ էլ սովորութիւններ է ստեղծում իւր համար։ Նա իւր աշխատած բոլոր փողը կնոջը կամ երեխաներին չի բերիլ այլ նրա մեծ մասը կթողնի գինետանը։ Նրա բարեկամաները կլինին իւր հետ խմոզները, իսկ տանը Սոդոմ-գոս մոր է, կնոջ անվերջ կռիւ և տուր ու դմբոց, երեխաների լաց ու կոծ, կեղտ և աղքատութիւն։ Երբ փոխուին մարդու հասկացողութիւնները, երբ նա հասկանայ որ արաղը սպանիչ թոյն է, փորձիչ օձ, որ ոգելից խմիչքի մէջ ոչ թէ ուրախութիւն կայ, այլ ցաւ ու վիշտ, այն ժամանակ նրա կեանքն էլ կփոխուի։ Առաջուայ նորա հետ խմոզ բարեկամները կօտարանան, տան մէջ առատութիւն կլինի, իսկ ընտանիքի մէջ կտիրէ խաղաղութիւն և սէր։

Նոր հասկացողութիւնները յառաջ են բերում նոր կեանք։ Չի կարելի նոր մտքերն ու զգացմունքները հաշտեցնել հին սովորութիւնների հետ։ Հին սովորութիւնները յարմարուած են եղել հին հասկացողութիւնների, իսկ նոր հասկացողութիւնները պահանջում են նոր կարգեր և նոր կեանք։ Այդ իսկ պատճառով Փրկիչն ասում է, որ իւր նոր աւետարանական վարդապետութիւնը չի կարելի յարմարեցնել հին կռապաշտական սովորութիւնների։ Նոր հասկացողութիւնները Աստուծոյ, մարդկանց, արդարութեան և կեանքի մասին պահանջում են և նոր կարգեր՝ բոլոր սովորութիւնների, կենցաղական կազմի արմատական կերպարանափոխումն։ Մարդուքիստոնեայ դառնալով պէտք է լինի, ինչպէս ասում է Պողոս առաքեալը, նոր արարած. «Բայց եթէ ի Քրիստոս նոր արարած ինչ իցէ. զի հինն էանց և արդ նոր եղեւ ամենայն» (Կորն. Բ. հմ. 16). Քրիստոսի աշակերտ դառնալ—չի նշանակում միայն աւազանում երեք անդամ ընկղմուիլ. զզին խաչ կախել և եկեղեցական մատեաններում քրիստոնէական անուն կրել. այլ այդ նշանակում է՝ հոգւով ծնուիլ, ամբողջ էութեամբ վերանորոգուիլ, նոր հասկացողութիւններ ընդունել և ըստ այնմ նոր, բարի, մաքուր կեանք վարել սկսել։ Գալիլայի կանա քաղաքում հարսանիքի ժամանակ

Յիսուսի կատարած առաջին հրաշքի նշանակութիւնը նրանում չէր, որ Յիսուս ջրով լիբը ամանների վրայ «ամենաւշւ դինի» վերնագիրը կպցըեց, թէև ջուրը ջուր էլ մնացայլ հրաշագործութիւնը նրանումն էր, որ Աստուծոյ զօրութեամբ ջուրը խակական գինի դարձրեց, ամանների մէջ եղած նիւթի թէ կազմը և թէ համը փոխեց։ Հենց այդպիսի վերածնումն պէտք է կատարուի մարդու հոգու մէջ, եթէ նա ուզում է տեղ ունենալ Աստուծոյ խնջոյքում։ «Քրիստոնեայ» անունով նոր վերնագիր պէտք չէ, այլ կեանքի նոր ճաշակ, նոր բնաւորութիւն։ «Հինն էանց և արդ նոյ եղեւ ամենայն», ասում է առաքեալը։ Փրկիչը սովորեցնում է. «Նոր գինին չի կարելի լցնել հին տկերի մէջ»։ Այն ինչ՝ քրիստոնեաները ոչ միայն իրանց սովորական կեանքի մէջ, այլ նոյն խակ տօնեերին, հանգէսների ժամանակ մինչև այժմ խակ պահպանել են շատ հեթանոսական սովորութիւններ։ Նոր, քրիստոնէական վարդապետութիւն ենք դաւանում, սակայն կեանք ենք վարում հեթանոսաբար, ըստ հնոյն Առէք, օրինակ, բարեկենագանը։ Ամեն տեղ՝ ամենամեծ քաղաքներից սկսած մինչև գիւղերը բարեկենգանը կատարում են ինչպէս ամենամեծ տօն։ Ամենուրեք աշխատանքները դադարում են. դպրոցներում պարապմունքները ընդհատում, տներում ամբողջ օրերով չափից դուրս ուտում-խմում են, փողոցներում ազմուկ և իրարանցում։ Ինչո՞ւ համար է այդ բոլորը, ինչ հիման վրայ։ Մօտենում է մեծ պասը, ազօթքի օրեր են վրայ հասնում, խակ մեր խելքը ուրախութեան հետ է։ Ինքն ըստ ինքեան ուրախութիւն անելը, ի հարկէ, մեղք չէ, եթէ կատարւում է մաքուր և պարզ սրտով և զգաստ կերպով, բայց ամեն բան իւր ժամանակն ունի Եկեղեցու գաւթում, տաճարի շէմքին խաղերի և զուարծութիւնների տեղը չէ, այստեղ սաղ չեն գալիս ուրախական երգերը։ Տաճար գնալու ժամանակ մեր տրամադրութիւնը լինում է լուրջ, աղօթական, Եկեղեցու բակը մտնելով երեսներս խաչակներում ենք, գաւթում ջերմեռանդութեամբ գլխարկներս վերցնում, սուրբ տեղի մերձաւորութիւնը պահան-

ջում է առանձին յարգանք։ Հենց այդպէս էլ պասի շէմ-քին՝ ապաշխարութեան նախորդ օրերը չպէտք է նուիրուեն կերուխումի, աղմկալի զուարճութիւնների։ Այդ օրերը բարեկենդանի զեղխութեան և աղմուկին նուիրել՝ նշանակում է ցոյց տալ, թէ որքան մեծ տարբերութիւն կայ մեր հասկացողութիւնների և կեանքի մէջ։ 'Կուրս է գալիս, որ քրիստոնէական հասկացողութիւնները այլ են, իսկ մեր սովորութիւնները բոլորովին այլ։ Այդպէս էլ պէտք է լինի, որովհետեւ մեր բարեկենդանը հին տիկ է. հին, ժամանակը անցկացրած կուապաշտութեան մնացորդ։

Այն ամանը, որը երկար ժամանակ գործ է դրուել որ և է հատած կամ փտած նիւթի համար, եթէ բոլորովին չմաքրեն՝ նախկին համն ու հոտը կմնայ։ Նոյնպէս և մենք պէտք եղածին պէս չենք մաքրուել ապաշխարութեամբ, թոյլ ենք համակուած Աւետարանի ոգւով։ Քրիստոնէութիւն ընդունելուց մօտ 1400 տարի է անցել և դեռ ևս շատ կուապաշտական սովորութիւններ կան մեր մէջ։ Մեր քրիստոնէական հասկացողութիւնները միաւորուած են հեթանոսական սովորութիւնների հետ, նոր գինին լցնում ենք հին տկի մէջ։ Ժամանակ է նոր տկեր պատրաստել նոր գինու համար։ Քրիստոնէական հասկացողութեան համեմատ վարել կեանքերս, ժամանակ է մտածել՝ արդեօք բարեկենդանը կազմի պասի նախորդ օրը։

Երբ մարդ բոլոր ուժով վազում է, անհնար է նրան կանգնել միանգամից. մզումից նա ակամայ մի քանի աւելորդ քայլեր կանի. անհրաժեշտ է առաջուանից նախազգուշացնել կանգման տեղի մասին։ Հենց այդպէս էլ անում է եկեղեցին մեծ պասից առաջ։— Նայիր քո ներսը, ասում է Աւետարանը, մտածիր, քննիր արդեօք ամեն բան կարգին է. կարսղ ևս հանգիստ և վստահութեամբ գնալ այս ճանապարհով։ Աստուծոյ ճանապարհից չես շեղուել. Աստուծոյ արդարութիւնից շատ չես հեռացել, ինչպէս անառակ որդին։ Յիշիր, սերմանացանի ժամանակը անցել է, կդան հունձի օրերը։ Յիսուս տուել է մարդկանց բարութեան և արդարութեան սերմերը, արդեօք

աճեցրել ես մէկը՝ Ուղարկուած ես աշխարհ, Աստուծոյ կալուածը. Տիրոջ տալու հարկ աշխատած ունիս արդեօք, աւելացրել ես Աստուծոյ եկամուտը, նպաստել ես երկրի վրայ բարութեան և արդարութեան աճելուն:

Որքան աւելի խորասուզուիս, այնքան աւելի հոգուդ կտիրէ տիրութիւն և թափութիւն. Որքան տարիներ ես անցկացրել, որքան ոյժ սպառել—սակայն ինչի համար կարծես ուզում ես մաքսաւորի նման երեսն ի վայր ընկնել և ազօթել, «Աստուած, քաւեա զիս զմեզաւորս». ուզում ես անհամարձակ քայլերով անառակ որդու պէս մօտենալ Հայրենի տան և խնդրել. «Յաց ինձ ապաշխարութեան դռները, կենսատու»:

Ահա այդ րոպէներին նրապիսի վայրենութիւն է թւում նուիրուել որկրամոլութեան, արքեցութեան և առհասարակ բարեկենդանի այդ ազմուկին:

—Ե՞նչ արած, կասէք դուք, մենք չենք սկսել, մենք էլ չենք վերջացնի, մարդկանց հակառակ չի կարելի երաթալ. ի՞նչպէս կարելի է ուրիշներից յետ մնալ. կժաղթեն, կդատապարտեն, բարեկամութիւնները կկտրեն:

Դատարկ խօսքեր են, անհիմն պատճառաբանութիւններ, Ասում ես մենք չենք սկսել, որ մենք էլ վերջացնենք. միթէ: Իսկ եթէ քեզ տանեն մի հինաւուրց անանցանելի անտառ, չէ որ կաշխատես մի ելք գտնել. Ժառանգաբար քար ու քանդ եղած տնտեսութիւն ես ստանում, հօ կսկսու կարգի բերել, մի նոր խրճիթ ես տեղափոխուում, որտեղ քո նախորդ տնկեցները ահագին կեցտ են կուտել, միթէ չես աշխատիլ մաքրել. շուրջդժափուած իրերը հաւաքել: Մեր կեանքի մէջ էլ ժառանգաբար մեր նախնիքներից ամեն տեսակ անբարեկարգութիւն և ցես է ժամած: Ժամանակ է, վերջապէս, ուշքի դալ, մտածել, որ մենք ախոռում չենք ապրում, այլ Աստուծոյ աշխարհում, որ մեր երկիրը Աստուածային ժառանգութիւն է, որտեղ ամեն ինչ պէտք է բարեկարգ լինի, —որ ամբողջ տիեզերը մի ընդհանուր Աստուածային տաճար է, որտեղ ամեն մարդ պէտք է ծառայի Աստու-

ծուն, միշտ իւր աստուածպաշտական պարտքը կատարի։ Փամանակ է մաքրութելու, ժամանակ է թողնելու հին տկերը և կեանքը կազմակերպելու ըստ նոր քրիստոնէական հասկացողութեան։ Իսկ եթէ նոր կարգերը, նոր տկերը մարդկանց դուր չգնն. ոչինչ. միայն թէ Աստուծոյ հաճելի մինի և նրա արդարութեանը համաձայն։ Թող մարդիկ իրանց բարեկամութիւնները խզեն, միայն դու Աստուծուց շրաժանուես։ Յիմար, տգետ մարդիկ քեզ չեն հասկանայ, բայց բարի, խելացի մարդիկ կզնահատեն քեզ և փոքր առ փոքր իրանք էլ քեզ կհետեւեն։

Այսպիսի մի դեպք է պատահել։ Զինուորական ծառայութիւնից մի երիտասարդ վերադարձել էր. նա այնատեղ գրել կարդալ էր սովորել և հետը նոր-կտակարան բերել։ Սկսեցին համագիւղացիք իրիկունները նրա մօտ հաւաքուել, միասին կարդալ զրոյց անել. կարծես մուժտեղ ճրագ վառեցին. շատ բանի վրայ նրանք սկսեցին ուրիշ տշքով նայել. Զինուորի տանը հարսանիք պիտի լինէր՝ հարեանի աղջկանը պիտի առնէին. Ուրիշների մօտ հարսանիքից առաջ խօսում են այն մասին, թէ քանի վեդրօ արագ կերթայ, կամ հարսանիքին ոչխար են մորթելու թէ կով. Իսկ այս նորերի մօտ այս տեսակ խօսակցութիւն էր լինում։

— Լաւ բան չէ, որ հարսանիքը արքեցողութեամբ անցնի. Քրիստոսի Աւետարանի համաձայն պսակը մեծ խորհուրդ է, երկու հոգի միանում են, ինչպէս Քրիստոս միանում է եկեղեցու հետ. նոր կեռնք է սկսւամ, նոր ընտանիքի հիմք գրւում, նոր ցեղի օրօրոց պատրաստում. այստեղ աղօթք է պէտք և ոչ օղի. մեծ երի գործունէութիւնն է հարկաւոր և ոչ երգ ու պար. ոչ թէ յիմար սրախօսութիւններ, այլ երիտասարդ զոյգին լարաւներ՝ աղնիւ, աշխատալից, սիրով կեանք վարելու. Մարդիկ նոր հասկացողութիւն ստացան, ըստ այնմ էլ իրանց կեանքը կազմակերպեցին. նոր գինին լցրին նոր տկի մէջ իսկ թէ ուրիշներն ինչ կխօսեն, ինչպէս կվերաբերեն, այդ մասին նրանք հոգ չեն տանում. Բայց գիւղում այդ նո-

բութիւնները բաւական զրոյցի նիւթ դարձան. — «Հարսանիքի են պատրաստում, հիւրեր չեն կանչում, ինչոյցի պատրաստութիւն չեն տեսնում. այս ինչ բան է»:

Վերջապէս հարսանիքն էլ հասաւ. Զահիլները համեստ կերպով, առանց աղմուկի եկեղեցուց տուն գարձան, խրճիթ մտան, աղօթեցին. ծնողները օրհնեցին նրանց, սեղան նստան, բաց արխն Աւետարանը, սկսեցին կարգալ. Լուսամուտների տակ ամբողջ գիւղն էր կանգնած, բոլորը զարմանում էին թէ ինչ հարսանիք է այս. իսկ մի կին մինչև անգամ թքում էր.

— Թիւ, ասում էր. սա աղօթատեղի է, և ոչ հարսանիք, պէտք է գնալ կամ տէրտէրին յայտնել. կամ ոստիկանութեանը, այսուղ մի հերետիկոսութիւն կայ:

— Հերետիկոսութիւն չէ, տան Մարիամ, ասաց այդատեղից անցնող քահանան, այլ նորապօակների կեանքի բուն քրիստոնէական սկզբնաւորութիւն: Եթէ մարդու աղջիկ տալու լինիս, քեզ էլ եմ խորհուրդ տալիս այսպիսի հարսանիք անել:

Գիւղացիք վիզները քորեցին.

— Եթէ մտածես, ճիշտ որ մեր արածը հարսանիչ չէ, այլ անկարգութիւն, ասում էին նրանք. տես մեր խուռարամտութիւնը, այդ զինուրի արածը վաս բան չէ: Հարկոս գիւղում հարսանիք կատարելու սովորութիւնը մի անգամից չփոխուեց. բայց ժողովուրդը, այնուամենայնիւ, չէր գաղարում. գատելուց, չափել-չափչփելուց և հարսանիքների մէջ տեղի ունեցած արբեցողութեան գէմ աւելի և աւելի բողոքներ էին լուսում. նոր գինին իւր ներդորսութիւնը ցոյց էր տալիս:

Այդպէս է և բարեկենդանը. պէտք է խօսել, բացատրութիւն տալ նրա մասին, պէտք է բարեկենդանի օրեւրին ներշնչել նոր քրիստոնէական մտքեր, նոր մտքերը կըերեն և նոր կեանք: Հարկաւ վազ տուող ամբոխին մի անգամից չի կարելի կանգնեցնել, բայց եթէ բարձր և երկար կանչես, այն ժամանակ ամբոխը կսկսի ականջ դնել և դանդաղել, և երբ հասկանայ, որ բռնած ճտնապարհը

սխալ է, բոլորովին կանդ կառնիւ

Ցաւալի՛ է, որ մեր ձայնը թոյլ է, բայց դրանից չի  
հետեւում, թէ պէտք է խնայենք մեր կոկորդը և չկանչենք»

Ապաշխարութեան խոզիչը.

Քրիստոսի Մեծ Կարապետ Յովհաննէսը երկար տաւ-  
րիներ առանձնութեան մէջ աղօթքով և պահքով պատ-  
րաստւում էր իւր քարոզութեանը։ Այնուեղ, Յորդանանի  
միւս կողմը, անապատի մենակութեան մէջ շատ խորին  
մտածմունքներ անցան նրա գլխով, շատ բան զգաց սրտով,  
շատ բան սովորեց անապատի գերեզմանական լոռութեան.  
մէջ՝ ականջ գնելով իւր ներքին—աստուածային ձայնին։  
Անապատը իւր փխրուն աւազով, մերկ, մռայլ ապառաժ-  
ներով, կիղիչ տաքութեամբ նրան յիշեցնում էր մարդկա-  
յին հոգիները. մարդկանց սրտերն էլ, կարծես, դատարկ  
են. ինչ որ չարագուշակ հոտ է փշում մարդկային կեան-  
քից, քարացել են բոլորը։ Սպասում են Փրկչին, աղօթում,  
որ երկրի վրայ Աստուծոյ թագաւորութիւնը տիրապետէ։  
Սակայն խօստացեալ Մեսիան գալով՝ կդժնի՝ արդեօք  
դէպի մարդկային սրտերը տանող ճանապարհը։ Բոլոր  
ճանապարհները ծուռած են, Աստուծոյ շաւիղը մոռա-  
ցուած։ Ո՞վ կառաջնորդէ այս ժողովրդին, որ արդարու-  
թեան ճանապարհից շեղուած է. ով կաւետէ մարդկանց  
փրկութեան ժամը մօտենալու մասին։ Ցաւում էր Յով-  
հաննէսի սիրտը՝ մարդկանց մոլորութիւնը տեսնելով. նա  
աւելի և աւելի զայրոյթով բորբոքւում է մարդկային անօ-  
րէնութեան դէմ, և կիղիչ խօսքը, ինչպէս անապատի  
տօթը, դուրս էր ցայտում նրա բերանից։ Յովհաննէսը  
զարդացած—պատրաստ էր Աստուծոյ խօսքը քարոզելու  
համար. «Եւ եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու,  
որդւոյ Զաքարիայի յանապատի անդ։ Եւ եկն յամենայն  
կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարու-  
թեան ի թողութեան մեղաց», (Ղուկ. գ. 2—3.)—«Դալիս

է Տէրը, ասում էր նա, մօտենում է Աստուծոյ թաղաւորութիւնը։ Տէրը կգայ և շուրջը կհաւաքէ իւր ձայնը լսողներին։ Նա կգայ ինչպէս դատաւոր, հեծանոցը ձեռոին՝ կալը մաքրելու։ ցորենը քամելով՝ հատիկը կրաժանէ յարդից, ցորենը կհաւաքէ շտեմարաններում, իսկ յարդը կայրէ անշէջ հրով։ Դուք նրան դեռ ևս չգիտէք, բայց նա արդէն ձեր մէջն է. պատրաստուեցէք ընդունել նրան, ուղղեցէք նրա շաւիղները. լցրէք արդարութեամբ ձեր դատարկ հոգիները, խոնարհեցէք, զսպեցէք նրա առաջ ձեր դուռող սրտերը։ Աստուած խոստացել է ձեզ փրկութիւն. նա եկել է արդէն և ձեզ մնում է ընդունել միայն, բայց ձեր սրտում, որ ծածկուած է թանձր շարութեամբ, անարդարութեամբ, անառակութեամբ, Աստուծոյ հատիկի համար տեղ չկայ։ Մաքրեցէք ձեր սրտերը, ապաշխարեցէք, և կտեսնէք Աստուծոյ փրկութիւնը։

**Թարգմ. Գրիգոր Բակ. Նոր-Արևելեանց.**